ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 28/1907 «28» 12 2021թ.

Ձեր

Յունիպովեր ՍՊԸ (ՀՎՀՀ 01287628)
Ք.Երևան, Գ.Հասրաթյան 13/1.
էլ. հասցե՝ unipower@inbox.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով քսանյութի ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Յունիպովեր» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Մասնավորապես մատակարարը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համապատասխան քանակներով պետք է մատակարարեր՝ 1850 կգ քսանյութ, որի մատակարարումը ընդհանրապես չի իրականացվել:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը ամբողջական միակողմանի լուծել է ՀՀ ոստիկանության և «Յունիպովեր» ՍՊԸ-ի միջև 20.05.2021թ-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-30-ԱՊՐԱՆՔ/2021/ԱՎՏՈ/1 ծածկագրով Պայմանագիրը:

Հարկ է նշել, որ Պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Միաժամանակ մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը՝ որակավորման ապահովում, պայմանագրի ապահովում և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագրերը, սահմանված կարգով, կներկայացվի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին գումարները փոխանցելու նպատակով:

ոստիկանության գնդապետ ***Վ. Մովսիսյան***

Կատարող՝ Բ.Փահլևանյան
Հեռ. 50-39